ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 10) 52 68 44
ֆաքս (+ 374 10) 52 68 44
էլ. փոստ info@moh.am

22.11.2017թ. N 22/08/14532-17

Ձեր N _____

«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ
ՆԱԽԱԳԱՀ ԼԻԱՆԱ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Դոյդոյան

Ձեր 2017 թվականի նոյեմբերի 15-ի հարցման կապակցությամբ հայտնում եմ.

1. 2017 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում ՁԻԱՀ-Ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում պետական բյուջեից ֆինանսական միջոցներ են տրամադրվել հետևյալ կազմակերպություններին.

ա/ ՀՀ ԱՆ «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ 80.724.992 ՀՀ դրամ, Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով հիվանդերի դիսպանսեր հսկողության, հակառետրովիրուսային և օպորտունիստիկ վարակների բուժման, ՄԻԱՎ-ի վերաբերյալ բնակչության տարբեր խմբերի շրջանում խորհրդատվությունների և հետազոտությունների, ՄԻԱՎ-ի նկատմամբ հետազոտություն իրականացնող լաբորատորիաների մեթոդական և տեխնիկական աջակցության, ՄԻԱՎ/ՁԱԻՀ-ի համաճարակաբանական հսկողության, վիճակագրական տվյալների ամփոփման, զեկույցների պատրաստման ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման 2017-2021թթ. պետական նպատակային ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման համար:

բ/ ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ին՝ 69.423.914 ՀՀ դրամ, Հայաստանի Հանրապետությունում ներարկային թմրամիջոցներ օգտագործողների մեթադոնային փոխարինող բուժման ծրագրի իրականացման համար

գ/ ՀՀ ԱՆ «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ 453.473.723 ՀՀ դրամ, Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի կանխարգելման, վաղ հայտնաբերման և բուժման, հիվանդների տնային խնամքի կազմակերպման, սոցիալական աջակցության տրամադրման, խորխի նմուշների տեղափոխման, ազգային ծրագրի մշտադիտարկման, դեղամիջոցների և ծախսանյութերի ձեռքբերման, ծրագրի կառավարման ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի կառավարման 2016-2020թթ. ազգային ռազմավարության միջոցառումների իրականացման համար:

ՀՀ ԱՆ «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը, իր հերթին, 2017 թվականին հատկացված ֆինանսական միջոցներից 28.200.000 ՀՀ դրամ մրցութային կարգով հատկացրել է «Հայկական կարմիր խաչի ընկերություն» ՀԿ-ին՝ Երևանում և ՀՀ մարզերում ՏԲ դեպքերի կանխարգելման և ակտիվ հայտնաբերման աշխատանքների իրականացման համար:

2. Առողջապահության նախարարության պաշտոնական էջում ֆինանսավորված դրամաշնորհային ծրագրերի հաշվետվությունների հիպերհղում առկա չէ:

3. 2017 թվականի առողջապահության նախարարության կողմից նվիրատվություններ, սուբսիդիաներ և գնումներ և այլ տեսակի ֆինանսավորում հասարակական կազմակերպություններին և հիմնադրամներին չի հատկացվել:

ՀՀ ԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՏԵՂԱԿԱԼ՝ /

Կատարող՝ ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի
հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյան
հեռ. (060) 80 80 03 /2301